ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 3

2024թ. մարտի 10-ին կնքված թիվ 6/24–ՊԱ ծառայությունների մատուցման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան **«18» սեպտեմբերի 2025թ.**

«Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկը (այսուհետ նաև՝ Հիմնարկ), ի դեմս տնօրենի պաշտոնակատար Գրիշա Հովհաննիսյանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու), ով գործում է Հիմնարկի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ քաղաքացի Քնարիկ Բդոյանը (նույնականացման քարտ՝ 005831599, տրված՝ 18.04.2017թ.-ին, 007-ի կողմից) (այսուհետ նաև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին ծառայությունների մատուցման սույն պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. Պայմանագրի «Պայմանագրի առարկան» 1-ին բաժնի 1.2 կետը փոփոխել հետևյալ կերպ. «Կատարողը պարտավորվում է «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով նախատեսված և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը վերապահված «1192. Կրթության որակի ապահովում» ծրագրի «11024. ՀՀ պետական դպրոցների ԳՏՃՄ առարկաներ դասավանդող ուսուցիչների վերապատրաստում նոր ստանդարտներին համապատասխան» և «32007. ՀՀ պետական դպրոցների՝ ԳՏՃՄ լաբորատորիաներով ապահովում» միջոցառման շրջանակներում իրականացնել հետևյալ գործառույթները.
2. Պայմանագրի «Ծառայությունների մատուցման կարգը» 2-րդ բաժնի 2.2. կետը փոփոխել և Պայամանգրի գործողության ժամկետը երկարաձգել՝ սահմանելով նոր ժամկետ, այն է՝ «Պայմանագիրը գործում է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը»:
3. Պայմանագրի 4.1.2 կետը փոփոխել և այսուհետ կարդալ հետևյալ կերպ. «Ամփոփված մրցույթների շրջանակներում մասնավորապես՝ թիվ ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-25-26/4 ծածկագրով գնման գործընթացների արդյունքում կնքված պայմանագրերով 2025 թվականին դպրոցներին մատակարվելիք լաբորատոր սարքավորումների տեխնիկական հատկորոշիչների համապատասխանութան դիտարկման արդյունքում ներկայացված հաշվետությունների և Պատվիրատուի կողմից դրանք ընդունելուց հետո 30 բանկային օրվա ընթացքում Պատվիրատուն Խորհրդատուին վճարում է միանվագ 350.000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և այլ պարտադիր վճարները:
4. Պայմանագրի «Պայմանագրի գինը և վարձատրությունը» բաժինը փոփոխել և լրացնել նոր 4.1.3 կետով, այն է՝ «Քիմիա առարկայի գծով 2025 թվականին անցկացվող բոլոր մրցույթների գնահատման արդյունքում ներկայացված հաշվետությունների և Պատվիրատուի կողմից դրանք ընդունելուց հետո 30 բանկային օրվա ընթացքում

Պատվիրատուն Խորհրդատուին վճարում է միանվագ 95.000 (իննսունհինգ հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և այլ պարտադիր վճարները:»

5. Պայմանագրի «Պայմանագրի գինը և վարձատրությունը» բաժինը փոփոխել և լրացնել նոր 4.1.4 կետով, այն է՝ «Ընդ որում կողմերն ընդունում են, որ Պայմանագրի 4.1.3 կետով սահմանված գումարը վճարվելու է քիմիա առակայի գծով 2025 թվականին անցկացվող բոլոր մրցույթների գնահատման արդյունքում ներկայացված հաշվետվությունների դիմաց՝ միանվագ կարգով:»
6. Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ համաձայնագրով սահմանված պայմանները համարել ուժի մեջ՝ 2025 թվականի հուլիսի 21-ից: Համաձայնագիրը համարվում է 2024թ. մարտի 10-ին կնքված թիվ 6/24–ՊԱ ծառայությունների մատուցման պայմանագրում անբաժանելի մաս:
7. Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) օրինակից, 2 (երկու) էջից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:
8. Պայմանագրի մյուս կետերը մնում են անփոփոխ:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	Կատարող
«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Վրացյան 73, ՀՎՀՀ՝ 02550991, Բանկ՝ ՀՀ գանձապետարան, Հ/Հ՝ 90011046670 **Տնօրենի պաշտոնակատար՝** **Գ. Հովհաննիսյան** ստորագրություն	Քնարիկ Բդոյան Նույնականացման քարտ՝ 005831599, տրված՝ 18.04.2017թ.-ին, 007-ի կողմից, ՀԾՀ՝ 6005620541 Հաշվառման հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վարշավյան 12 Բանկ՝ «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ Հ/Հ՝ 2050060399241001 **Քնարիկ Բդոյան** ստորագրություն